ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ I Կաթողիկոս Ամենայն Հայոց ժամանեց Թիֆլիս օգոստոսի 29-ին, առաւօտեան ժամ 10-ին երկաթուղու յատուկ գնացքով և ընդունուեց կայարանի կայսերական օթեւանում, ուր սպասում էին Վեհափառին տեղական կոնսիստորի ներկայացուցիչները, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը խորհրդարանի հայ անդամներով, պարսից հիւպատոսը, մամուլի ներկայացուցիչները։ Վեհափառի հետ էին Տէր Տեղակալից ուղարկած պատուիրակները՝ Արիստակէս եպ. Սեդրակեան և Սարգիս եպ. Գասպարեան, Մեսրոպ և Եփրեմ աբեղաներով, որպէս նաև Խորէն վարդապետ Ստեփանէ։ Քաղաքագլխի պաշտօնակատար պ. Պ. Իզմայլեան ռուերէն բաւականի երկար ճառով ողջունեց Վեհափառին և հայցեց Նորա օրհնութիւնը քաղաքի համար։ Խորէն վարդապետ թարգմանեց այդ ճառը հայերէն, որին յաջորդեց Վեհափառի պատասխանը և օրհնութիւնը։ Ամբողջ կայարանը թնդում էր «կեցցէ Հայրիկ» գոչումներով։ Վեհափառը, ուղեկցութեամբ պահապան կողակ ձիաւորների և հարիւրաւոր կառքերի ու խուռն բազմութեան՝ քառաձի կառքով դիմեց դէպի Վանքի Մայր եկեղեցին։ Ճանապարհին ամեն տեղ ժողովուրդը ողջունում էր։ Ալէքսանդրեան այգու մօտից սկսեց հանդիսաւոր ընթացքը հոգևորականների, երգեցիկ խմբի, աշակերտուհիների ուղեկցութեամբ, Վեհափառը ամպհովանու տակ։ Վանքի եկեղեցում Վեհափառը աղօթեց և քարոզեց ու ապա ահագին բազմութեան ոգևորած գոչումներով ուղեկցած՝ դիմեց Առաջնորդական պալատը։ Սկսեցին ընդունելութիւնները, որ շարունակուեցին յաջորդ օրերը, մինչև Վեհափառի մեկնումը Թիֆլիսից սեպտ. 7-ը։

ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ, որով Թագաւոր Կայսրը հաստատել է Խրիմեան Հայրիկին Կաթողիկոս Ամենայն Հայոց, ընդունեց Վեհափառը Կովկասի պ. Կառավարչապետից, սորա պալատում,

սեպտ. 3-ին, ժամը 1-ին, ներկայութեամբ բարձր աստիճանաւորների, քաղաքի ակնաւոր բնակիչների և տեղական թերթերի խմբագիրների։ Նոյն այդ հանդիսին մատուցեց Նորին Վեհափառութեանը Կալսեր շնորհած ադամանդեայ խաչը վեղարի վրայ կրելու և Ալէքսանդր Նեսկու շքանշանը կրծքին կրելու համար։

ԶՈՀԵՐ։ Քաղաքական գործերի համար հինգ դատապարտուածները, որոնք գիշերով կախեցին Անդորալում (Թիւրքիա) հետևեալներն են, Թորոս Ծառուղեան Գիւրինցի, Յովհաննէս Արզումանեան Կեսարացի, Կիւլպէնկ Համալեան, Միրիջան Խանաբախեան ու Փանոս Նաղուբեան Տալասեցի։ Թիւրքերը հաւատացնում են թէ այս նահատակները, կախաղան բարձրանալու միջոցին, գոչել են՝ Նաչաւուն Էրմենիստան (Կեցցէ Հայաստան)։ Անդորալի բանդում դեռ կան 34 հոգի, որոնք մի քանի տարով բանտարկելու են դատապարտուած և 24 մեղադրուածներ։

Գ. ՄԻՆԱՍ ՁԵՐԱՋ գտեղել է «Journal of the Royal Asiatic Society» (Թագաւորական Ասիական Ընկերութեան ժուրնալ) թերթում իւր մի դասախօսութիւնը աշուղ Սայադ Նովալի մասին։

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՎԵԱԼՆԵՐԻՆ։ Ս. Էջմիածինը, որպէս միշտ կը լինեն մեր ընթերցողները (Մուրճ № 3, Լուրեր) իւր միջոցներով օգնութեան հասնելով սովեալներին, «Արարատի» միջոցով դիմումն էր արել հասարակութեանը նէրների համար։ «Արարատ» ամսագրի № 6-ից իմանում ենք, որ մինչ յունիսի վերջը այդ նպատակով նէրներ ուղարկել են՝ բժիշկ Յովհաննէս Գասպարեանց (Թիֆլիսից) 200 ռուբլի, հալր Բէգ-Նազարեանց (Թիֆլիսից) 20 ռուբլի և պ. Գ. Մ. Առաքելեանց (Բագուից) 100 ռուբլի։ Նոյն «Արարատից» իմանում ենք, որ Մայր Աթոռը իւր միջոցներից օժանդակութիւն է տուել գիւղացիներին 1,200 խալարից աւելի, այսինքն մինչ 36,000 պուդ հացահատիկ։ Այդքան հացահատիկ, որ կազմում է եղել վանքի ունեցած գրեթէ ամբողջ պաշարը, ոմանց տրուած է ձրի, ոմանց ընթացիկից պակաս գնով, ոմանց փոխարինաբար բաց առանց վերադրի։

ՇՈՒՇԻԱՑ ԹԱՏՐՈՆԻ 25-ԱՄԵԱԿԸ։ Շուշի քաղաքում առաջին անգամ հայ թատրոնական ներկայացում տուել է 29 տարի առաջ, եթէ չենք սխալւում պ. Գէորգ Զմշկեանի և այլոց նախաձեռնութեամբ։ Չորս տարի անցած այդ քաղաքում չինուեց թատրոնական բեմ, որի վրայ ամեն տարի մէկ կամ մի քանի անգամ ներկայացումներ են տուել։ Ներկայ օգոստոս ամսին լրացաւ

այդ բեմի շինութեան քանուհինդ ամեակը, որ և տօնուեց տեղական հասարակութեան կողմից, նախաձեռնութեամբ տիկին Մարգարիտ Մելիք-Շահնազարեանի և պ. Տիգրան Նազարեանի։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ լուսանկար բազմաթիւ պատկերները չեն արտայայտում Վեհափառ Կաթողիկոսի դէմքի գծագրութիւնները բացի այն մէկ լուսանկարից որ պատրաստուած է Երուսաղէմում և ի ցոյց դրուած Էնֆիանճեանց-Տէր-Յովսէփեանցի ծխախոտի խանութում։ Այդտեղ Նորին Վեհափառութիւնը հանուած և պրոֆիլով, բազկաթոռի վրայ նստած և գրութեամբ զբաղուած։ Ցանկալի է որ այդ լուսանկարի օրինակները տարածեն ամենուրեք։ Կրկնում ենք, որ բոլոր մեր տեսածներից այդ մէկը միայն իսկապէս յաջողած է։ Լուսանկարչի անունը մեզ յայտնի չէ։

ԽՈՂԵՐԱՆ, որ անցեալ տարուայ համաճարակումից յետոյ Անդրկովկասում խպառ անլսելացել էր, բայց ոչ Եւրոպական Ռուսաստանում, օգոստոս ամսուայ սկզբից նորից սկսեց երևալ մեզանում, բայց առանց այն ուժի և այն ծաւալի, որ նա ունէր անցեալ տարի։ Թիֆլիսում, սկսած յուլիսի 29-ից մինչ օգոստոսի վերջը, խոլերայով հիւանդացածների թիւը հասել էր շուրջ 80 հոգու, որոնցից վախճանել են մինչ մօտ 50 հոգի։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՑԵԱՆՑ նշանակուած է Էջմիածնի տպարանի և ձուլարանի կառավարիչ։ Դա մէկն է լաւագոյն նշանակումներից, որ եղել է սրբ. Սրեմիալի տեղակալութեան ժամանակ։ Ցոյս ունենք որ պ. Ղ. Աղալեանի կառավարչութեան օրերով Էջմիածնի տպարանը կըստանայ ցալժմ եղածից աւելի բարձր դիրք, կառավարիչը կը մացնի կատարեալ կարգ ու կանոն, կը կրթի իւր ստորադրեալ պերսոնալը օրինակելի տպարանին վալել ուղղութեամբ։ Աւելացնենք նաև որ չանձին պ. Աղալեանի Էջմիածինը ձեռք է բերում մի պաշտօնեայ, որը, իբր վաթսունական թեականների սերնդի միակ յառաջադիմական ներկայացուցիչը մեզանում, ընդունակ է բարերար ազդեցութիւն գործել իւր շրջապատի վրայ առհասարակ։

Բժ. Թ. ԶԱՔԱՐԵԱՆԻ լօգուածի վերաբերմամբ, «Մուրճի» այս տետրում, այն տեղի համար, ուր հեղինակը խօսում է զինուորականութեան վնասակարութեան մասին, մենք ունենք նկատողութիւններ անելու, որ և վերապահում ենք աւելի յարմար ժամանակին։

† Բժկ. ԴԱՆԻԷԼ ԼԻՍԻՑԵԱՆ, հնագոյնը Թիֆլիսի բժիշկներից, վախճանուեց ներկայ օգոստոսի վերջերքում։ Հանգուցեալը այս տարի

կրում էր «Աղբիւր-Տարազի» փոխ-խմբագրի կոչումը, բայց առանց որ և է աշխատակցութեան։

«ՀԱՅՐԵՆԻՔ» լրագիրը, որի անպակման դադարեցնելու մասին հաղորդել էինք անցեալ ամիս, կարճ ժամանակից յետոյ նորից թոյլատրութիւն ստացաւ հրատարակելու։ Մեր կողմից մի թիւրիմացութիւն էր, որ կարծել էինք թէ վիշեալ լրագիրը իբր առմիշտ դադարեցրած էր։

† ՏԻԳՐԱՆ ԷՖ. ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ։ Պոլսում նորերս վախճանուեց Տիգրան էֆ. Կիւմիւշկերտան, որ կաթողիկոսական ընտրութիւնների համար Պոլսի ներկայացուցիչն էր։ «Հայրենիք» լրագիրը իւր №-ում առ 9 օգոստոսի հանգուցեալի վիշատակին նուիրում է մի առաջնորդող, որից քաղում ենք հետեւեալ տողերը վերաբերեալ հանգուցեալի անձին և գործունէութեան։ Այդ լրագիրը վկայում է Կիւմիւշկերտանի մասին իբր «պատուաւոր տչխատողի, պարտք ճանչցող աղնիւ սրտի տէր մէկը»։

«Ժողովներու, խորհուրդներու, հոգաբարձուներու մէջ երբէք ի դերև չհանեց իր վրայ դրուած վստահութիւնը»։

«Իր աշխատութիւնը ամենէն աւելի նուիրեց Ազգային Հիւանդանոցին, որուն Հոգաբարձութեանը մասնակցեց տասը տարի»։

«Աղքատ ընտանիքի մը զաւակներէն մին էր, 1834-ին ծնած, նախնական թեթև կրթութենէ մը յետոյ արուեստի կը մտնէ, դերձակութիւն կը սովորի, յետոյ փոքրիկ առևտուրի մէջ կը մտնէ, Խրիմի պատերազմին ատեն Խրիմ կերթայ ուր ամենածանր նեղութիւններ, տառապանքներ կը կրէ, անօթութեան ու ծարաւի դիմանալով։ Եւ յետոյ իր աչքաբացութեամբը, խելքովը ու բաղդին աջակցութեամբը բաւականին հարստութեան մը տէր կ'ելլայ»։

«Սակայն այս միջոցին ինքնակրթութիւնը առաջ կը տանի, միշտ կարդալով, միշտ հետաքրքրելով ոչ միայն ներկային այլ անցեալին զոր ջերմապէս կը սիրէ։ Եւ ահա այդ սէրը ցեղական ժառանգած յատկութիւններու միացած կը մղէ զինքը իր եկեղեցիին, իր ազգին հաւատարիմ ու բարեկամ աշխատողն ելլալու»։

«Հանգուցեալը շատ կանուխէն ձեռք կառկառեց ապագայ խոստացող պատանիներու, զորս ղրկեց Գերմանիոյ և Ֆրանսայի համալսարանները, նպաստեց ուրիշներու կրթութեանը, հոգալով անոնց ծախքերը Լիսէի մէջ»։

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։ Արտասահմանեան մի

թերթի գրում են Մուշի կողմերից՝ «Պուլանըխի Համզաշեխ գիւղի բոլոր տները (30 տուն) իսլամութիւն կընդունին, յուսալով հարստահարութենէ զերծ մնալ։ Կառավարութիւնը զանազան պարգևներով կը քաջալերէ նոցա, որք կ'ուզէ օրինակ ըլլան հալ ժողովրդեան։ Նոյնպէս կ'իսլամանան Ալաշկերտի Եօնջալու գիւղացիները (մօտ 70 տուն)։

ՆԵՐՔԻՆ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ։ Նոյն աղբիւրից տեղեկանում ենք. Ալաշկերտի զանազան գիւղերէն 35 տուն խմբովին քիւրդերու առաջնորդութեամբ ռուսատաճկական սահմանը կ'անցնեն և կը դիմեն Ղարսի նահանգապետին՝ տեղ և հող ուզելով։ Նոյն կողմերէն դարձեալ 60 տուն կ'ուզեն գաղթել Կովկաս և կը հասնեն մինչև Ապաղ-Կէօլ կոչուած տեղը. բայց թուրք կառավարութիւնը խանգարում նոցա ետ կը դարձնէ։

ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ։ «Մուրճի» խմբագրի խնդրանքը Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց յատուկ ունկնդրութիւն շնորհել իւր մօտ «Մուրճի» խմբագրութեանը աշխատակիցներով հանդերձ օգոստոսի 31-ին, առաւօտեան ժամ 10 և ½-ին։ Խումբը ներկայացաւ Վեհափառին հետեւեալ կազմով՝ խմբագիր պ. Ա. Արասխանեանց, հրատարակիչ պ. Փ. Վարդապետեանց, աշխատակիցներ՝ պ. պ. Գրիգոր Վարդանեանց, Յովհաննէս Թումանեանց, Արշակ Բարխուդարեանց, Յովհաննէս Բարխուդարեանց, Սամուէլ Բալաղեան, Յակոբ Անագչեան, Մկրտիչ Նաւասարդեան, Մխիթար Տէր-Անդրէասեան, Պետրոս Մելքումեան, Գէորգ Ղարաջեան։ Խմբի հետ միանալու ցանկութիւն յայտնած էր նաև պ. Սեդրակ Թառալեան, որին, սակայն, տկարութիւնը չներեց տանից դուրս գալու։

Նորին Վեհափառութիւնը ընդունեց «Մուրճի» խմբագրութիւնը շատ սիրալիր կերպով։ Խորէն ծ. վ. Սանփանէն ներկայացրեց Վեհափառին ամսագրիս խմբագրին, որը Վեհափառի աջը համբուրելուց յետոյ, ըստ իւր հերթին ներկայացրեց Նորան հրատարակչին ու աշխատակիցներին, որոնք ամենքը Նորա աջն առան։ Իւր և խմբի կողմից խմբագիրը շնորհաւորեց Վեհափառի բարի գալուստը ու հայցեց Հայրապետական օրհնութիւնը «Մուրճի» բոլոր աշխատակիցների համար։ Վեհափառ Հայրապետը օրհնեց ամենքին ու հարց ու փորձ արաւ «Մուրճի» հանգամանքների մասին, յայտնելով որ ինքը Երուսաղէմում առիթ է ունեցած ծանօթանալու մեր ամսագրի հետ. խօսեց դիտութիւնների յառաջադիմութեան ու մամուլի մասին։ Խմբագրի

խօսքին թէ՝ մենք շարունակում ենք Ձերդ Վեհափառութեան երեսուն տարի առաջ սկսած գործը, երբ «Արծուի Վասպուրականն» էիք հրատարակում, Նորին Վեհափառութիւնը պատասխանեց ժպտալով թէ նա մի դուշնաքեալ գործ էր, և ինձնից վեռոյ ալ շատ խմբագիրներ եկան։ Խմբագիրը այդ առիթով յայտնեց՝ թէ «Վասպուրական Արծուի» ոգին չկորաւ, նա յարատևեց և անցաւ իւր յետնորդներին և որ կարող ենք վստահացնել Նորին Վեհափառութեանը, որ «Մուրճը» ևս այդ ոգուց ժառանգութեան մաս ունի։ Ապա ամսագրիս խմբագիրը իւր անունից և ամբողջ խմբի կողմից դիմեց Վեհափառին հետևեալ առաջարկութեամբ,—թէ ցանկալի է որ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը, վերջնական կարգադրութիւններ անելուց առաջ, մամուլին մասնակից անի ենթադրեալ կարգադրութիւնների քննադատութեանը. իսկ այդ կարելի է միայն այն ժամանակ, երբ, վերջնական վճիռներ տալուց առաջ, հոգևոր կառավարութեան դիտաւորութիւնների մասին կանխօրէն ծանուցվի։ Նորին Վեհափառութիւնը պատասխանեց՝ թէ կան բաներ, որոնց մասին առաջուց յայտարարելը անկարմար է, բայց կան և այնպիսիք, որոնց ծանուցանելը կարելի է, և որ Նա դէմ չէ վերջիններիս նկատմամբ այդպէս վարուելու։ Երբ Վեհափառը, կանգ առնելով այդ նիւթի վրայ, ասաց թէ Հայրիկը սովորութիւն ունի իւր մտադրութիւնների մասին խօսել, ամսագրիս խմբագիրը դարձրեց Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը այն բանի վրայ, որ ցանկալի կըլինէր եթէ այդ կատարուէր «Արարատ» ամսագրի միջոցով։ Ապա Վեհափառը, օգտուելով «Արարատ» ամսագրի վիշատակումից, յայտնեց, որ «Արարատը» դալ տարուայ յունուարից սկսած՝ հիմնովին պիտի բարեփոխէ։

Նորին Վեհափառութիւնը ի վերջոյ յայտնեց, որ Նա կարօտ է գործերի և անձերի ծանօթութեան և որ վեց ամիս Նա մտադիր է ուսումնասիրել այդ ամենը։ Եւ իրան յատուկ հումորով վերջացրեց խօսքը՝ ասելով թէ այս վարդապետներից ու եպիսկոպոսներից ոչ ոքին դեռ չէ ճանաչում, ու այս վեց ամսում պէտք է նոցա ևս ուսումնասիրէ։

Ունկնդրութիւնը տևեց կէս ժամ։

«Մուրճի» պատգամաւորութիւնը առթից օգտուեց ողջունելու նաև Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին, որը սիրալիր ընդունելութիւն արաւ իւր ընդունարանում։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌԻ ԿՈՂՄԻՑ ընտրած է ամսագրիս խմբ.

բաղիր Ա. Արասխանեանց, որը կը ներկայանայ Նորին Վեհափառութեանը Օծման հանդէսին և կը ներկայացնի Նրան Գողթնեցւոց ուղերձը։

ՆԵՐՍԷՍ ՇԱՀԼԱՄԵԱՆ, լայնի տենոր, թոյլտուութիւն է ստացել Վեհափառ Կաթողիկոսից Օծման հանդէսին երգել ս. Էջմիածնում։ Պ. Շահլամեանը դորա համար Պալմալի թատրոնի վարչութիւնից խնդրել է մի ամսայ արձակուրդ։

ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ։ Թիֆլիսի մի խումբ կրթած արհեստաւորների մէջ միտք է ղղացել արհեստաւորների ընկերութիւն հիմնել։

ՇԱՐԿՕ։ Ներկայ օգոստոսի $^{8}/_{11}$ Մորան ամառանոցում վախճանուեց բժշկութեան դոքտոր-պրոֆեսոր Շարկօ։ Հանդուցեալը վաղուց արդէն գիտութեան մէջ փայլում էր որպէս առաջնակարգ աստղ։ Իբրև գործնական բժիշկ—Շարկօն համաշխարհային անուն էր վայելում։ Բայց նա նշանաւոր գիտնական էլ էր։ Նա ստեղծեց նեարդային պաթոլոգիան, որին վերաբերում է նորա աշխատութիւնների մեծ մասը։ Նա զբաղուեց նաև հիպնոտիսմով և զարկ տուեց նորագոյն հոգեբանութեան։ Շարկօն կրթել է գիտնականների մի ամբողջ սերունդ, և իւր աշակերտների թւում ներկայումս կան բազմաթիւ գիտնականներ, որոնք ծագող աստղեր են և անուն են ստեղծել իրանց մասնագիտութեան մէջ։ Շարկօի հետ Ֆրանսիան կորցրեց իւր ներկայիս փառքերից մէկը։

ՍԵՆԿԵՒԻՉԻ «ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ» վէպի երրորդ և վերջին մասը սկըսում ենք տպագրել ներկայ համարից։ Վէպի այդ երրորդ մասի թարգմանողն է պ. Սրուանդ Թաղիանոսեան։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ անակնկալ պատճառներով չկարողացանք տպել։

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԳՐՔԵՐ

1) ԳԱԼԷՄՔԱՐԵԱՆ Հ. Գրիգորիս վ., Մխի թարեան ուխտէն.—Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը։ Հատոր Ա.—Բ. Շրջան ի սկզբանէ հայ հրատարակութեան (1794) մինչև 1840.—Բ. Շրջան. 1840-էն մինչև 1860 թ. (մէկ լուսատիպ պատկերով)։ Վիէննա, Մխիթարեան տպարան, 1893 թ. գինն է 2 ֆրանկ 50 սանտիմ (1 ռ.)։

2) ԿԱՐԻԷՐ, Ա.—Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ։ Քննադատական ուսումնասիրութիւնք։ Թարգմ. ֆրանսերէնից։ Վիեննա, Մխիթ. տպարան, 1892, գինն է 1 ֆրանկ։

3) ԳՐԻԳՈՐԵԱՆ, Լևոն.— Զար Հրեչտակ (կեանքի գծեր) Հրատարակութիւն Ղ. Կարապետեանի.—Թիֆլիս, տպ. Մելիք-Շահնազարեանցի, 1893, գինն է 15 կոպ.

4) TEZA, Emilio.—Dell „Essaemero" di Giorgio Pisije. secondo. La antica versione armena. Roma, Tipogr. d. R. Accademia dei Lincei, 1893.

5) ԼԷՕ.—Ախտահանութիւն (վէպ).—Հրատարակութիւն «Արօր» տպարանի № 1.—Բագու, տպ. Արօր 1993, գինն է 40 կոպ.

6) ՖԻԼՊՍԻՆ, Եղիս. Ստիւարտ.—Գթութեան քոյր. Թարգմ. Հայկ Գիլմսիրեան. Հրատարակ. Արօր տպարանի № 2.—Բաքու, տպ. Արօր. 189¹, գինն է 15 կոպ.

7) ՄԿՐՏՈՒՄԵԱՆ, Գ. քահ.—Ղազիմազենց Միքէլը, պատմուածք Ղազի-Մոլլի արշաւանքներից. Ա.—Մոսկուա, տպ. Գ. Բարխուդարեանի, 1893, գինն է 8 կոպ.

8) АСТВАЦАТРЯНЪ, В.—Долина блаженства (горская легенда).—Тифлисъ, тип. груз. Изд. Товарищества, 1893. գինն է 10 կ.

9) ՍԱՐԳԻՍԵԱՆ, Հ. Բարսեղ վարդապետ, ԿՈՒԽՍԷՆ Մխիթարաց.—Տեսութիւն Սեղբեստրոսի Պատմութեան և Մովսէս Խորենացւոյ աղբերաց. Վենետիկ, ի տպ. Սրբոյն Ղազարու, 1893. գինն է ?

10) ГР.—Патріархъ-Католикосъ Мкртичъ I.

11) ДІЕВЪ, Гр. А.—Армянскій вопросъ въ Турціи (изъ переписки съ стамбулскимъ публицистомъ). Съ двумя библіотечными карточками.—Москва, тип. Д. Иноземцова. 1893, գինն է 40 կոպ.

12) ՎԱՆ-ԴԷՅԿ.—Զորբորդ մոգը. Հրատարակ. Հ. Հրատ. Ընկեր.—Թիֆլիս, տպ. Վրաց Հրատ. Ընկ. 1893 թ. գինն է 5 կոպ.

13) ՂԱԶԱՐԵԱՆՑ, Ցակ.—Խուն-խոր. Տաճկահայերի կեանքից. Հրատ. Թիֆլ. Հ. Հրատ. Ընկ.—Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1893 թ. գինն է 60 կոպ.

14) ՐԱՖՖԻ.—Արծիւ Վասպուրականի (Խրիմեան Հայրիկ).—Հրատարակեց այրի տիկին Ռաֆֆի. Թիֆլիս, տպ. Ց. Մարտիրոսեանցի, 1893, գինն է 70 կոպ.

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ